ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» մարտի 2020թ. № 103

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 353 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ, 0408-0041 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 6,0 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 33-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Փոփոխություն կատարել Սպիտակ համայնքի ղեկավարի 2017 թվականի սեպտեմբերի 26-ի « 0408-0001 և 0550-0001 կադաստրային ծածկագրերով հողամասերի նկատմամբ Վարդան Առաքելյանի հողհատկացման հիմքերը վերականգնելու և սեփականության իրավունքը ճանաչելու մասին» թիվ 353 որոշման մեջ՝ որոշման վերնագրում, նախաբանում և 1-ին կետում նշված «0408-0001» թվերը փոխարինել «0408-0041» թվերով:

2. Սպիտակ համայնքի ղեկավարի 2017 թվականի սեպտեմբերի 26-ի «0408-0001 և 0550-0001 կադաստրային ծածկագրերով հողամասերի նկատմամբ Վարդան Առաքելյանի հողհատկացման հիմքերը վերականգնելու և սեփականության իրավունքը ճանաչելու մասին» թիվ 353 որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ կետով.
«2.Կադաստրային քարտեզում 6,0 հեկտար հողամասի հողատեսքը ուղղել գյուղատնտեսական այլ հողամասից՝ վարելահող, սուբյեկտն ուղղել համայնքայինից՝ քաղաքացու» :

3. Հաստատել 06-006-0408-0041 կադաստրային ծածկագրով 6,0 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի ճշգրտված սահմաններով հատակագիծը:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. մարտի 19
ք.Սպիտակ